ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 օգոստոսի 2025 թվականի N 1241-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի N 1024-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 1024-Ն որոշումը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է այն դեպքերի վրա, երբ ժամանակավոր անաշխատունակության առաջին օրը 2025 թվականի սեպտեմբերի 1-ն է կամ դրանից հետո, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի N 1024-Ն որոշման N 2 հավելվածի 24-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունիսի 1-ին: Այն դեպքում, երբ ժամանակավոր անաշխատունակության առաջին օրը մինչև 2025 թվականի սեպտեմբերի 1-ն է, իրավահարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի

հուլիսի 14-ի «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 1024-Ն որոշման՝ մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ:

3. Պաշտպանության նախարարության, Ներքին գործերի նախարարության, Ազգային անվտանգության ծառայության, Հարկադիր կատարումն ապահովող ծառայության, Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության, Հակակոռուպցիոն կոմիտեի (այսուհետ՝ համապատասխան մարմիններ) ղեկավարներին՝ համագործակցելով Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հետ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի N 1024-Ն որոշման N 6 հավելվածի շրջանակներում ապահովել համապատասխան թվային տվյալները Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության հետ փոխանակելու ծրագրային ապահովման մշակումն ու ներդրումը՝ մինչև 2026 թվականի հունվարի 1-ը:

4. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝

1) համագործակցելով համապատասխան մարմինների հետ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի N 1024-Ն որոշման N 6 հավելվածի շրջանակներում ապահովել սույն որոշման 3-րդ կետում նշված համապատասխան թվային տվյալները փոխանակելու ծրագրային ապահովման մշակումը և ներդրումը Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայությունում «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի միջոցով՝ մինչև 2026 թվականի հունվարի 1-ը.

2) ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի N 1024-Ն որոշման N 2 հավելվածի 24-րդ կետով նախատեսված՝ ուղեգրումը մերժելու պատճառների մասին ֆունկցիոնալության գնահատման e-disability համակարգից էլեկտրոնային առողջապահական համակարգի միջոցով բուժող բժշկին հաղորդագրություն ուղարկելու ծրագրային ապահովումը՝ մինչև 2027 թվականի հունիսի 1-ը:

5. Սահմանել, որ մինչև սույն որոշման 3-րդ կետում նշված՝ համապատասխան թվային տվյալները փոխանակելու ծրագրային ապահովման ներդրումը համապատասխան մարմնի աշխատակցի տվյալների փոխանակումը համապատասխան մարմնի և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության միջև իրականացվում է փոխհամաձայնեցված էլեկտրոնային փոստի հասցեներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

29.08.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ